ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԲԱԼԱՅԱՆ ՄԱՆՈՒՇ ԷՄԻԼԻ

ՌՈՊԵՐ ՀԱՏՏԵՃՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Ժ. 01.02 - «Նորագույն շրջանի հայ գրականություն» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան – 2025

Ատենախոսության թեման հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Սուրեն Դավթի Դանիելյան**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Սամվել Պարգևի Մուրադյան** բանասիրական գիտությունների թեկնածու **Հրաչյա Հարությունի Սարիբեկյան**
Առաջատար կազմակերպություն՝	**Երևանի պետական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2025 թվականի հուլիսի 11-ին՝ ժամը 12.30-ին, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲԿԳԿ-ի Գրականագիտության 003 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ ք. Երևան, Սուրբ Գրիգոր Լուսավորչի փողոց, 15:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2025 թվականի հունիսի 10-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ **Ս. Ա. Մարգարյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Արձակագիր, թատերագիր, հրապարակախոս և գրաքննադատ, «Մարմարա» օրաթերթի խմբագրապետ Ռոպեր Հատտեճյանի ստեղծագործության քննությունը հնարավորություն է ընձեռում պատկերացում ունենալու Պոլսում 20-րդ դարի երկրորդ կեսի հայ գրական-գեղարվեստական ու հրապարակախոսական մտքի զարթոնքի և ձեռքբերումների մասին:

Ատենախոսության մեջ դիտարկվել են Ռոպեր Հատտեճյանի պատմվածքների երկու ժողովածուները, «Առաստաղ» երկհատոր վեպը, թատերախաղերը և գրաքննադատական էսսեների՝ «Յուշատետր» խորագրով գրքերից մոտ տասը հատոր: Ըստ անհրաժեշտության՝ անդրադարձ է կատարվել կենսագրական որոշ կարևոր փաստերի:

Ռ. Հատտեճյանը արևմտահայ գրական բնօրրանում գեղագիտական ընկալման նոր սկզբունքներ մշակեց՝ հենվելով ժամանակակից եվրոպական գրականության մեջ զարգացում ապրող էկզիստենցիալիզմի մեթոդաբանության վրա, որի ուսումնասիրության շրջանակն ընդգրկում է մարդու ներաշխարհի և միջավայրի միջև ստեղծված խզումի և ներդաշնակության բանաձևի որոնումը:

Փոքր արձակի կերպարակերտման սկզբունքների շուրջ ուսումնասիրությունները բացահայտում են Ռ. Հատտեճյանի վաղ շրջանի ստեղծագործությունների փիլիսոփայական հարցադրումները, անհատի պատասխանատվության և ազատության սահմանները, ընդվզումի ու փրկության հնարավորությունները, պատումի գեղագիտական հանգուցալուծումները:

Ատենախոսության մեջ համակողմանի վերլուծության է ենթարկվել Ռ. Հատտեճյանի երկհատոր վեպը՝ «Առաստաղը»: Քննվել են վեպի հոգեբանական-փիլիսոփայական ելակետերը, գեղագիտական ընդհանրացումները, ազգային գիծը, կերպարաստեղծման արվեստն ու կոմպոզիցիոն հնարանքները: Կարևորվել են ազգային ու համամարդկային խնդիրների արծարծումները և գոյաբանական մտածողությունից բխող լուծումները:

Անդրադառնալով վիպագրական տարաբնույթ հարցադրումների՝ դիտարկվել են նաև սյուժետային որոշ զարգացումներ՝ գաղափարական ու գեղարվեստական կապակցվածությունը ընդգծելու համար: Աշխատանքում մեկնաբանվել են բովանդակային կառույցում առանձնակի դերակատարում ունեցող խորհրդանիշները, որոնք, առնչվելով հերոսների հոգսերին ու խնդիրներին, իմաստավորում են պատումի փիլիսոփայական խորքը, ասելիքի ակնարկն ու տողատակը:

Առանձին քննության են ենթարկվել Ռ. Հատտեճյանի թատերախաղերը: Մարդկային բնավորության ու ապրումի դրսևորումներում, հերոսների փոխհարաբերություններում հեղինակը փորձել է ներկայացնել կերպարների ինքնատիպ մտածելակերպն ու ինքնադատության սահմանները, գոյապաշտական շաղախին միահյուսված ազգային խնդիրները: Ռ. Հատտեճյանը հաճախ երգիծանքի ու զավեշտի տրամադրության խորքում դրել է մարդկային հոգու տագնապներն ու թևածումները, իրականության դեմ ընդվզումը:

Աշխատանքի չորրորդ գլխում անդրադարձ է կատարվել խմբագրապետ Ռ. Հատտեճյանի հրապարակագրական գործունեությանը «Մարմարա»-ում: Գեղագիտական քննության տիրույթում «Յուշատետր» էսսեները ներկայացված են որպես արվեստի ինքնատիպ դրսևորումներ, որոնք բացում են ստեղծագործական ազատության ու թեմատիկ բազմազանության լայն հնարավորություններ: Աշխատանքում փորձել ենք հիմնավորել էսսեների ճանաչողական–տեղեկատվական նշանակությունը՝ պայմանավորված հեղինակի աշխարհայացքով և նպատակադրումով: Գիտահանրամատչելի պատմելաոճը, պատմական ու արդիական տարրերի համադրումը, բովանդակային բազմազանությունը «Յուշատետր»-երի կարևոր բնութագրիչներն են:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության առարկան Ռ. Հատտեճյանի ստեղծագործության գեղագիտության քննությունն է, հեղինակի ստեղծագործության նորովի արժևորման փորձը: Ըստ այդմ՝ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- բացահայտել անհատի և հասարակության փոխհարաբերությունների էկզիստենցիալ ելակետերը,
- ցույց տալ գրողի և ժամանակաշրջանի կապը,
- վերհանել ստեղծագործությունների գեղագիտական առանձնահատկությունները,
- մեկնաբանել գրողի կերպարակերտման արվեստը,
- դիտարկել ազգային ու համամարդկային արժեքների համադրումը:

ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ռ. Հատտեճյանի ստեղծագործության շուրջ առանձին մենագրական աշխատանքներ ունեն Սուրեն Դանիելյանը («Ռոպէր Հատտէճեան. ներաշխարհի գեղարուեստական քննութիւն», Իսթանպուլ, 1996), Թորոս Թորանյանը («Ամբողջական գրագէտը. Ռոպեր Հատտէճեան», Հալէպ, 2002): Հեղինակի աշխարհայացքին ու նրա ստեղծագործությանը վերաբերող առանձին հարցադրումների անդրադարձել են Մաքրուհի Պ. Հակոբյանը, Լևոն Շառոյանը, Զարեհ Խրախունին, Գեղամ Սևանը, Արամ Սեփեթճյանը և ուրիշներ:

Մասնավորապես ուշադրության է արժանի «Ռոպէր Հատտէճեան գրական գործունէութեան 40-ամեայ հանգրուանին» գիրքը (Իսթանպուլ, 1987), որի մեջ ընդգրկված են տարբեր գրականագետների ու գրողների գնահատանքի խոսքերը: Համացանցի պաշտոնական տարբեր կայքերում և մամուլի էջերում կարելի է գտնել գրողի մասին բազմաբնույթ հոդվածներ, որոնք գրվել են տարբեր առիթներով և դրվագային բնույթ են կրում:

Ռ. Հատտեճյանի գրականությունը այնքան էլ ծանոթ չէ հայրենի ընթերցողին, թեպետ համալսարանական տարբեր ծրագրերում, հատկապես սփյուռքահայ ու պոլսահայ առանձին դասընթացներում այն որոշակի ընդգրկում ունի:

Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է Ռ. Հատտեճյանի ստեղծագործության՝ իբրև պոլսահայ նորագույն գրականության ուշագրավ երևույթներից մեկի՝ գիտական համայնքի ավելի լայն շրջանակներին ներկայացնելու և հեղինակի աշխարհայացքը, խոհափիլիսոփայական շերտերը, գեղագիտական ըմբռնումները նոր տեսանկյունից հիմնավորելու նպատակադրումով:

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Աշխատանքի գիտական նորույթն այն է, որ Ռոպեր Հատտեճյանի ստեղծագործությունը փորձ է արվել դիտարկել հայ և համաշխարհային համանման թեմաների քննության համատեքստում, զուգադրումների ճանապարհով:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ատենախոսության մեջ առաջադրված դրույթները փաստարկելու համար առաջնորդվել ենք թեմատիկ-ժանրային, ինչպես նաև ժամանակագրական քննության սկզբունքներով: Կիրառել ենք գիտական մի շարք մեթոդներ՝ մեկնաբանական, վերլուծական, համադրման, համեմատության, վերացարկման և այլն: Առանձին դեպքերում անդրադարձել ենք Հատտեճյանի կենսագրության ինչ-ինչ դրվագների, ինչը հնարավորություն է ընձեռել ճանաչելու գրողի աշխարհայացքի հիմունքներն ու ստեղծագործական գեղագիտության կողմնորոշիչները: Ըստ այդմ՝ օգտագործել ենք նաև կենսագրական մեթոդը: Աշխատանքի համար մեթոդական հիմք են հանդիսացել ոչ միայն անվանի հայ գրականագետների ուսումնասիրությունները, այլև գրական-քննադատական նորագույն աղբյուրներ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության արդյունքները կարող են կիրառվել սփյուռքագիտական-բանասիրական հատուկ դասընթացների շրջանակներում, օգտագործվել տարբեր ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման համար:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլող հոդվածները տպագրվել են ԲԿԳԿ-ի կողմից ճանաչված գիտական ժողովածուներում, ներկայացվել հանրապետական և միջազգային գիտաժողովներում: Աշխատանքը քննարկվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Վ. Պարտիզունու անվան հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում: Առանձին քննարկում է կազմակերպվել նաև Արցախի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի գրականության և լրագրության ամբիոնում: Հաշվի են առնվել արժեքավոր դիտարկումները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության գլուխներում փորձել է արվել պահպանել ժամանակագրական կապը, միաժամանակ կարևորվել է թեմատիկ բաժանումը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ ներկայացված են ատենախոսության ուսումնասիրության առարկան, նյութի մշակվածության աստիճանը, նպատակներն ու խնդիրները, աշխատանքի տեսական-մեթոդական հիմքերը: Հիմնավորված են թեմայի արդիականությունը, գործնական նշանակությունը, նորույթը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՓՈՔՐ ԱՐՁԱԿԻ ԿԵՐՊԱՐԱԿԵՐՏՄԱՆ ԱՐՎԵՍՏԸ

Պոլսահայ նշանավոր հեղինակ Ռոպեր Հատտեճյանի առաջին տպագիր գործը՝ «Բառասխալ» պատմվածքը, 1946-ին լույս տեսավ «Անիւ» հայերեն ամսագրի էջերում իր ավագ ընկերներ Խաչիկ Ամիրյանի և Վարուժան Աճեմյանի թարգմանությամբ ու աջակցությամբ: «Հայ գրականութիւնը ինչ շահեցաւ, չեմ գիտեր, բայց գիտեմ, թէ ես շահեցայ հա՛յ գրականութիւնը...»[1],- հաստատել է Ռ.

[1] «Սան», Իսթանպուլ, 1968, թիվ 1-2, էջ 39:

Հատտեճյանը՝ որոշելով այդուհետ ստեղծագործել միայն հայերեն, իսկ «Բառասխալը» հետագայում դարձավ նրա առաջին ժողովածուի վերնագիրը:

Աշխատանքի առաջին գլխում անդրադարձ է կատարվել Ռ. Հատտեճյանի «Բառասխալ» (1972) ու «Մարդոց մեծութեան եւ խեղճութեան մասին» (1979) պատմվածքների ժողովածուներին: Մասնավորապես ընդգծվել են նրանց մեջ արծարծված գոյապաշտական հարցադրումները, փոքր սյուժեների միջոցով խոր ապրումներ բացահայտելու սկզբունքները, աբսուրդի ու զավեշտի, սովորականի և արտասովորի, երևակայականի ու առօրեականի նուրբ անցումները: Աշխատանքի այս հատվածում կատարվել է դիպաշարի, կերպարային համակարգի քննություն:

«Բառասխալ» խորագիրը մարդկանց միջև հարաբերությունների տարբեր ենթաշերտեր է բացում: Կյանքում ամեն երևույթ կամ խոսք ունի փոխըմբռնման ներքին պահանջ, որի ենթակայական խորքը նկատում է արձակագիրը: «...Մարդուն կեանքը, ինչպէս նաեւ մարդկային ամէն տեսակ պայքար եւ հակամարտութիւն կը ծփայ համատարած բառասխալի մը վրայ»[2],- գրել է նա ժողովածուի առաջաբանում:

Ժողովածուում ընդգրկված են 19 պատմվածքներ, որոնք գրվել են 1946-1960 թվականներին և մինչև առանձին գրքով լույս տեսնելը տպագրվել «Անիւ», «Ճառագայթ», «Երջանիկ տարեգիրք», «Սան» և «Մարմարա» պարբերականներում: Պատմվածքներում դիտարկված ամենից ցայտուն գիծը մարդու մենության արձանագրումն է: Դրանցում հեղինակը շերտ առ շերտ բացահայտում է մարդկային հարաբերությունների հոգեբանական թնջուկները, հավանական ու անհավանական լուծումների հասնելու ճանապարհները:

Ռ. Հատտեճյանի ստեղծագործությունը անհատականացնող բնութագրումը կերպարաստեղծման արվեստի նոր եղանակն է: Ըստ հեղինակի՝ յուրաքանչյուր անհատ տարբեր ձևով է ընկալում կյանքի և մահվան փիլիսոփայությունը, մարդկային փոխհարաբերությունները. մարդը հաճախ դառնում է խոցելի, անիմաստ առօրյան փորձում քողարկել հեգնանքի կամ ժպիտի դիմակի տակ:

Հատտեճյանական հերոսներին բնորոշ են խորքային ապրումները, ներանձնացումը, ներքին ընդվզումներն ու հակասությունները: Աշխարհի երևույթների ու իրերի փոխհարաբերության մասին յուրատիպ մտածողություն ունենալը պատմվածքների հերոսներին հաճախ տանում են անհավանական լուծումների, չնայած վաղ շրջանի իր գրվածքների մասին Ռ. Հատտեճյանը գրում է, որ դրանք բոլորն էլ ապրված ճշմարտություններ են. «Վերադառնալով սկզբնական շրջանի պատմուածքներուս, ատոնք կեանքէ կտրուած ապրումներ չէին պատկերացներ: Կեանքէ կտրուած ապրում ըսուած բանը գրեթէ գոյութիւն չունի: Մարդկային ներաշխարհը այնպիսի խորունկ եռեւեփում մը ունի, որ հոն ամէն ինչ պատահական ու հաւանական է»[3]:

---

[2] **Հատտէճեան Ռ.**, Բառասխալ, Իսթանպուլ, 1972, էջ 6:

[3] «**Ռ. Հատտէճեան գրական գործունէութեան 40-ամեայ հանգրուանին**», Իսթանպուլ, 1987, էջ 46:

Ռ. Հատտեճյանը կարևորում է գիտության ազդեցությունը գրականության վրա, և պատումի էջերում հաճախ հասնում հոգեբանական և իմաստասիրական որոշակի բացահայտումների: «…Երբ կարդաք Հատտէճեանին գործերը, չենք կարծեր, որ հանդիպիք նոյնիսկ մէկ էջի, ուր ան հոգեբանական վերլուծումի ենթարկած չըլլայ մարդկային այս կամ այն արարքը»[4],- գրում է Թ. Թորանյանը: Սա Հատտեճյանի արձակը բնորոշող կարևոր հատկանիշներից է: Այս հիմնավորման մեջ էականն այն է, որ եթե գիտությունը գրականության անհրաժեշտությունը չունի, չի նշանակում, որ հակառակը ևս ճիշտ է:

Այսպիսով՝ «Բառասխալ» ժողովածուի հավաքական կերպարը ժամանակակից անհատն է՝ փոքր մարդու ներաշխարհի հոգեկան բարդ շերտերով, ուր արտահայտվում են մերթ ընդվզումը, մերթ համակերպումը, մերթ աշխարհը վերափոխելու ուղիների տենդագին որոնումները:

Ռ. Հատտեճյանի պատմվածքների երկրորդ ժողովածուն, որ վերնագրված է «Մարդոց մեծութեան եւ խեղճութեան մասին», 1977-ին արժանացել է «Ալեք Մանուկեան» մշակութային հիմնադրամի գրական մրցանակի և 1979 թ. տպագրվել Բոստոնում: Ժողովածուում ընդգրկված 13 պատմվածքները, որոնք նախապես տպագրվել էին հիմնականում «Մարմարա» օրաթերթում, քննության են առնում մարդու ներհակ բնույթը, հոգու ու մարմնի ներքին տեսողության ընկալումները:

Ժողովածուի նախաբանում Ռ. Հատտեճյանը ցույց է տալիս իր պատմվածքների միասնական կառույցը և ընդհանրացման բանալին: Նա գեղագիտական քննության ասպարեզ է բերում մարդու էությունը, անհատի մտածողության մեջ՝ մեծության ու թշվառության վայրիվերումները: Հեղինակի համակրանքը անվերապահորեն մեծության կողմն է. նա հավատում է անհատի ներուժին:

«Վերելքի ու անկման հերթագայութեան օրինաչափութիւնները քննութեան օբյեկտիւ իրողութիւնն են, սակայն իմաստաւորւում են միայն գիտակցութեան բարձրագոյն ոլորտում: Այստեղից՝ Հատտէճեան իմաստասէրի սուր հակումը գիտակցութեան եւ հոգեբանութեան գործօններին, որոնք գեղագիտական հայեցողական համակարգում մնում են առաջնային ելակէտեր»[5],- գրում է Ս. Դանիելյանը՝ բնութագրելով գրողի բուն նպատակադրումը պատմվածքների նոր ժողովածուում: Փաստորեն վերելքն ու անկումը այլ անվանումներ ու դրսևորումներ էլ ունեն, որոնք Հատտեճյանի գրչի տակ հակադրվում են մերթ իբրև ծնունդ ու մահ, մերթ հպարտություն ու ինքնադատություն, մերթ էլ մեծություն ու խեղճություն, սկզբնակետ ու վերջնակետ:

Էկզիստենցիալիստ գրողի աշխարհայացքի մերօրյա ընկալումներում դրսևորվում են մարդու մտածողության ոլորտները, երբեմն՝ մարդ-հանրություն

---

[4] **Թորանեան Թ.,** Ամբողջական գրագէտը. Ռոպէր Հատտէճեան, Հալէպ, «Կիլիկիա» տպ., 2002, էջ 14:

[5] **Դանիէլեան Ս.,** Ռոպէր Հատտէճեան. ներաշխարհի գեղարուեստական քննութիւն, Իսթանպուլ, «Մուրատ օֆսէթ» տպ., 1996, էջ 71:

բախումը, ինչպես նաև բնության և գիտակցության խաչաձևումները: Հեղինակը փիլիսոփայական ընդհանրացումներով փորձում է բնութագրել անհատին, նրա ներաշխարհը, որ շրջափակված է մեծության ու խեղճության ցանցով: Նա ուրվագծում է մի համապատկեր, որտեղ առանց մեկը մյուսի չեն կարող գոյություն ունենալ տափարակն ու լեռը, լույսն ու ստվերը, նաև մեծությունն ու խեղճությունը:

Ռ. Հատտեճյանը համոզված է՝ մահը անհատի գոյության ավարտն է, մարդու խեղճության ամենաակնառու դրսևորումը, որը բացարձակապես հավասարեցնում է բոլոր մարդկանց: Իսկ ո՞րն մարդկանց մեծությունը պատկերելու չափանիշը: Իրականում նշաձողը բարձր է: Ըստ Ռ. Հատտեճյանի՝ ինքնորոնման, ինքնաճանաչման ճանապարհին մարդը կարող է իր մտքով ու կամքով բարձրանալ միջավայրի ճղճիմ միջակությունից և դառնալ աշխարհի մեջ կարևոր էակ: Մարդու մեծությունը կախված է նրա ապրումակցելու հատկությունից, և աշխարհը կարող է դառնալ ավելի լավը, եթե բոլոր մարդիկ պատասխանատու զգան կատարված ամենաանշան դեպքի համար:

Մեծությունը սկզբնավորվում է Նարեկացու աղոթքի և ապաշխարանքի սահմաններից: «Ես եմ այդ բոլորը, եւ բոլորի յանցանքները իմ մէջ են»[6],- ասել է մեծ աղոթասացը: «Հինէն ի վեր ինծի այնպէս կը թուի, որ շատ մը կարեւոր դէպքերու պատասխանատուն ես եմ»[7],- միջնադարյան հսկային կարծես երկրորդում է Ռ. Հատտեճյանի հերոսը:

Այսպիսով՝ Ռ. Հատտեճյանը փոքր արձակում անդրադարձել է Էկզիստենցիալիզմի փիլիսոփայության կարևոր սկզբունքներից մեկին՝ բոլորի և ամեն ինչի համար պատասխանատվություն կրելու գաղափարին, և պատկերել է ազատության ու պատասխանատվության սահմաններում երկմտող մարդու կամքի դրսևորումները, մարդու ներաշխարհի փլուզման հետևանքով սկիզբ առած «մակընթացությունն» ու «տեղատվությունը», սեփական Ես-ից հրաժարվելու անհնարինությունն ու աբսուրդից սկզբնավորվող հույսը:

Պատմվածքներում Ռ. Հատտեճյանը ստեղծել է կյանքին, Աստծուն ու մարդուն ոչ միայն տարբեր տեսանկյուններից, այլև տարբեր հարթություններից դիտարկելու հնարավորություն: Հոգեբանական խոր հակասությունների միջով է անցնում Աստծո և մարդու գոյատևման ու ինքնահաստատման ճանապարհը, արձակագիրն այն ներկայացնում է որդու և նրան կյանք տվող հոր միջև ծագած հակասությունների օրինակով : Ըստ հեղինակի՝ Աստված էլ արժևորվելու կարիք ունի, գնահատվել է ուզում, այդ պատճառով ստեղծել է մարդուն: Ռ. Հատտեճյանը մարդու հավաքական կերպարի միջոցով ներկայացնում է Աստծուն հակադրվելու, սեփական ճանապարհը ինքնուրույն որոշելու ազատ կամքի դրսևորումը: Սա տրամաբանորեն հանգեցնում է նրան, որ Աստված վերարժևորում է իր և մարդու արարքները:

---

[6] **Գրիգոր Նարեկացի**, Մատեան ողբերգութեան, Եր., «Մուղնի» հրատ., 2003, էջ 436:

[7] **Հատտէճեան Ռ.**, Մարդոց մեծութեան եւ խեղճութեան մասին, Պոսթըն, «Պայքար» հրատ., 1979, էջ 63:

Ամփոփենք, որ երկրորդ ժողովածուի պատմվածքներում նկատելի է հերոսի երկվությունը՝ հարաբերական անկումի պահն ու ինքնակենտրոնացման ճիգը: Գոյապաշտական արձակի տառապանքի ու որոնումի ճանապարհը Ռ. Հատտեճյանի ստեղծագործության հիմնական առանցքն է:

Պատմվածքների ժողովածուների բովանդակային հարցադրումները ըստ էության նախապատրաստում են վեպի կառույցը, հաստատում «ապրելու դատապարտվածության» բանաձևի հարակայությունը հեղինակի ստեղծագործության մեջ:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՊՐՈՒՄԻ ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ. «ԱՌԱՍՏԱՂ»

20-րդ դարի երկրորդ կեսին պոլսահայ գրականության մեջ վեպի ժանրը նվաճումներ է արձանագրում. այդ ժամանակաշրջանում գրվեցին Ա. Տիրազանի «Փորձի կաւը», «Գազանը Աստուած մը կ'ուզէ», Զ. Պիպեռյանի «Լկրտածը», «Մրջիւններու վերջալոյսը» եւ ուրիշներ: Շարքը լրացնում են Ռոպեր Հատտեճյանի «Առաստաղ» (1983) և «Առաստաղին միւս կողմը» (2000) հատորները, որոնց վերլուծությանն էլ վերաբերում է աշխատանքի երկրորդ գլուխը: Երկհատոր վեպի վերլուծության տիրույթում քննության են առնվել հայ մարդու ապրելակերպը, անհատի մտածողության ու երևակայության սահմանները, հեղինակի կերպարաստեղծման ու խորհրդանիշների իմաստավորման հնարավորությունները, տարբեր սերունդների՝ նույն երևույթի կամ իրադարձության նկատմամբ ունեցած վերաբերմունքի շերտերը:

Չնայած վեպի առանցքային գիծը համարվում է ազգային թեման, սակայն Ռ. Հատտեճյանը արծարծում է փիլիսոփայական տարբեր հասկացույթներ: Հոգեբան գրողը ստեղծում է փոքր իրավիճակներ, բայց կատարում է մեծ ընդհանրացումներ: «Գիրքը իր ամբողջութեանը մէջ ՄՏԱԾՈՒՄներու օղակներով կազմուած հոգեվիճակ մըն է, երբեմն պարզ, բայց իր պարզութեանը մէջ խորունկ, մարդկայնական զգացումներով հարստացած»[8],- «Առաստաղ»-ի մասին գրել է Ա. Սեփեթճեանը:

Մինչև «Առաստաղ»-ի գրվելը Ռ. Հատտեճյանը մի քանի անգամ անդրադարձել է կյանքն ապրած ծերունու գեղարվեստական կերպարին, հոգեբանական տարբեր տեսանկյուններից ներկայացրել նրա ապրումները, կյանքի և մահվան շուրջ մտորումները: Նման օրինակ է «Բառասխալ» ժողովածուի «Ծերունիի մը օրագիրը» պատմվածքը: Ծերունու մտածումի արտացոլումը նրա օրագրային գրառումներն են, որտեղ հիվանդ ու լքված մարդը ներկայացնում է իր վիճակը, ապրումները: Կյանքին կապվելու վերջին հույսը փլուզվում է՝ բախվելով

[8] **Սեփեթճեան Ա.**, Գրական հանդիպումներ, Պէյրութ, «Սիփան» հրատ., 2014, էջ 348:

ֆիզիկական վիճակի հետ կապված կենսական լուրջ խնդիրներին: Գրողի եզրահանգումը մեկն է. մարդը պարտավոր է պայքարել ապրելու համար մինչև իր կամքի ու հնարավորությունների դրսևորման վերջին սահմանը, մինչև «ընկղմուելը», որն անխուսափելի է:

Հոգեբանական նույն ապրումների միջով է անցնում «Երազ» պատմվածքի հերոսը, որն ապրում է միաժամանակ երկու աշխարհներում՝ իրական ու երևակայական: Պատմվածքում երազն է ծերունու առանձնության լուսավոր պահը, ինչպես «Առաստաղ»-ում՝ մտածումը: Դրանք աստիճանաբար դառնում են կյանքի կարևոր բաղադրիչներ՝ ապրելու անհրաժեշտություն և երջանիկ զգալու նախապայման:

«Առաստաղ»-ին առնչվող պատկերներ, կերպարներ և հարցադրումներ կան ոչ միայն պատմվածքներում, այլև թատերախաղերում: «Վաստակ» դրամայի(1953-1954թթ) հերոսը յոթանասունամյա ուսուցիչ Վահե Ծերյանն է: «Առաստաղ»-ի հետ «Վաստակ» դրաման առնչվում է նրանով, որ երկուսում էլ ներկայացված են կենսափորձ ունեցող հայ ծերունիներ, ովքեր հենակետեր են փնտրում՝ կենսական խնդիրները հաղթահարելու համար: Եթե հուսախաբ Ծերյանը վաղամեռիկ որդու՝ Ատրուշանի երևակայական ներկայությունը գերադասում է նյութականի վրա կառուցված իրական կյանքից, ապա «Առաստաղ»-ի ծերունին ապրելու անհրաժեշտության հիմնավորումները փնտրում է «պատկերահոս» առաստաղի խորքերում:

Ի տարբերություն «Վաստակ»-ի, որտեղ անդրադարձներ կան ազգային կյանքի միայն սոցիալական-հասարակական հարցերին՝ վեպերում արծարծումները բազմաբնույթ են՝ սկսած տեղահանությունից մինչև արտագաղթ ու ազգային ավանդույթների պահպանում, կերպարների անհատական մտածումներից մինչև համամարդկային հասկացությունների արժևորում:

Հարցադրման խորքայնությամբ, կերպարաստեղծման նպատակայնությամբ ու բարոյահոգեբանական հանգուցալուծումներով ընդհանրություններ ունեն երկհատոր վեպը և 1997-ին գրված ու բեմադրված «Մահն ա՞յս է արդեօք» թատերգությունը: Հույսն ու լքումը՝ մի կողմից, անհոգ կյանքն ու մոռացումը՝ մյուս կողմից, առաջ են բերում հարաբերությունների նույն անխուսափելի խզումն ու դրանից ծնվող մարդկային ողբերգությունը:

Քննության առնված կերպարների յուրօրինակ համադրությամբ Ռ. Հատտեճյանը «Առաստաղ»-ում կերտեց իր գլուխգործոց կերպարը՝ որպես մարդկային հզոր կամքի և մաքառման արտահայտություն, որը հաստատում է ապրելու ի՛ր բանաձևը՝ աշխարհի բոլոր մարտահրավերներին ի պատասխան. «Մենք դատապարտուած ենք ապրելու»[9]:

«Առաստաղ»-ը գրվեց միանգամից, ոգեշնչումով, ասելիքի ամբողջականությամբ ու դիպաշարային ինքնատիպ կառուցվածքով,

---

[9]**Հատտէճեան Ռ.**, Առաստաղ, Առաստաղին միւս կողմը, 2006, էջ 391:

հոգեփիլիսոփայական վերլուծումների պատճառաբանվածությամբ: Վեպի մտահղացումը, կառուցվածքը, նպատակադրումը, կերպարի ընտրության ու բացահայտման ծալքերը, ըստ հեղինակի, որոշակի գույն ու ձև ստացան շարադրելու ընթացքին զուգահեռ:

«Մտքիս մէջ բացարձակապէս որեւէ պատրաստութիւն չէի ունեցած, ոչինչ ծրագրած էի, տասը վայրկեան առաջ այդպիսի վէպ մը գրել իսկ մտքէս չէր անցներ... Կ'երեւի թէ Աստուած, կամ ներշնչումը, կամ բնութիւնը այնպէս մը օգնեցին ինծի, որ ես կեանքիս մէջ առաջին անգամ ըլլալով այդքան երկարաշունչ վէպ մը շատ կարճ ժամանակի մէջ գրեցի»[10] ,- ասել է Ռ. Հատտեճյանը:

Առաստաղը, որին սևեռված է անդամալույծ ծերունու հայացքը, անցյալն ու ներկան կապող օղակն է, կերպարի մտածողության առարկայական խորհրդանիշը, ներկայի գերզգայուն «հայելին», որի միջոցով նա «տեսնում» է հարազատների առօրյան, կռահում մտահոգությունները, հաղորդակից լինում նրանց նպատակներին ու անելիքներին:

Ինչո՞ւ «Առաստաղ»: Նույն դիրքով անկողնուն գամված հիվանդի համար հիշողությունների ու մտածումների «պաստառ» կարող էր դառնալ պատուհանից երևացող երկնքի հատվածը կամ դիմահայաց պատը: Բայց հեղինակային մտահղացումը՝ պատահական, և «պաստառի» ընտրությունը իմիջիայլոց չէ: Ուղղակի իմաստով՝ առաստաղը ծածկ է, ապաստան, որ պատսպարում է մարդուն: Ավելի լայն պատկերացմամբ՝ այն օջախ է, հայրենիք, և առաստաղից այն կողմ մարդն անտուն է, անհայրենիք: Ուրեմն խիստ խորհրդանշական է նաև երկրորդ հատորի խորագիրը՝ «Առաստաղին միւս կողմը», և վերջին՝ այդպես էլ չգրված երրորդ գրքինը՝ «Փլուզուող առաստաղ» կամ «Առաստաղը փլաւ»:

Երևակայության առարկայական արտահայտությունը՝ առաստաղը, հիվանդանոցային առօրյան անցյալի անձկալի օրերից զատող պատնեշն է, միաժամանակ ներկան ապագային կապող մաքուր էջը, որի վրա ամեն օր՝ մինչև իր մահը, ծերունու հայացքը ծնունդ է տալիս նոր խոհերի և պատկերների:

Թերևս Ռ. Հատտեճյանի փիլիսոփայական մտահանգումը միավորել է առաստաղի երկու խորհրդանիշները՝ պատկերելու համար և՛ մարդկային տառապանքն ու ընդվզումը, և՛ վստահելի ապաստան ու պատվար ունենալու թաքուն երազանքը: Այս դեպքում հեղինակի մտածողության հիմքը մի կողմից գոյապաշտական փիլիսոփայությունն է, մյուս կողմից՝ առարկայական խորհրդապաշտությունը:

Ծերունու կերպարով Ռ. Հատտեճյանը հաստատում է էկզիստենցիալիզմի տեսության հատկապես ընդվզումի փիլիսոփայությունը, ընդվզում՝ մահվան դեմ, հանուն կյանքի: Այդ ընդվզումի հիմքը մարդկային մտածողությունն է, իսկ պայքարի և գոյատևումի նախապայմանը՝ սեփական անձի պատասխանատվության սահմանումը:

---

[10] «**Մարմարա**», Իսթանպուլ, 1997, մարտ 5:

«Առաստաղ»-ի մեջ ազգային գիծը արտահայտվում է խորհրդանիշների պատկերումով: Ո՞վ է վեպի գլխավոր հերոս ծերունին, եթե ոչ հայրենի սնուցող հողից ու արմատից փրթած Սփյուռքը, ազգային աղետը երբեք չմոռացող, զարգացման ու առաջընթացի ոչ մի տեղաշարժ չակնկալող մարդկային հավաքական տիպար, որ դատապարտված է ապրելու՝ անընդհատ ունենալով նոր կորուստներ:

Ծերունու կերպարը բնորոշող մյուս կարևոր հատկանիշը ազգային նոր ողբերգության՝ նահանջի գիտակցումն է: Նրա համար աղջկա՝ Սաթենիկի ընտանիքի Կանադա մեկնելը գերդաստանի ու պապենական տան իրական առաստաղի փլուզում է: Արտագաղթը Ռ. Հատտեճյանը անվանում է «սարսափելի արիւնահոսութիւն» և «վտանգաւոր փորձութիւն», միաժամանակ ցավով արձանագրում, որ այդ երևույթը շարունակվում է:

«Առաստաղ»-ը ահազանգ է ազգային ողբերգության՝ արմատներից կտրվելու, սերունդների օտարացման, ընտանեկան երջանկության փլուզման մասին: Ըստ Հատտեճանի՝ մարդու համար ամենամեծ երջանկությունը ընտանիքի անդամների հետ միասին, «քով քովի» ապրելն է ու այն, որ «մահէն վերջ պէտք է քով քովի պառկին»[11]: Այստեղից էլ սկիզբ է առնում ընդվզումը անարդարության, պարտադրված գաղթի դեմ: Եզրահանգումը մեկն է. եթե մարդը դատապարտված է ապրելու, ապա նա պետք է պայքարի երջանիկ լինելու համար՝ իմաստավորելով իր գոյությունը:

Ծերունու կերպարը խորհրդանշում է նաև դարի աղետներին դիմակայող մարդկությանը, որը, ինչքան էլ հաշմված ու տկար, բայցևայնպես շարունակում է պայքարել հանուն սեփական բարօրության: Երջանկության հատտեճյանական ձևակերպումը «պարունակում» է ոչ միայն հող, տարածություն, հայրենիք, այլև հիշողություն, երևակայություն, կամք, սեր:

«Առաստաղ»-ի էջերում մտքի հետ կապված «գործողությունները» հաճախ գերազանցում են «շարժումին». սա կերպարաբովանդակային առանցքներում հանգեցնում է փիլիսոփայական հարցադրումների, որոնք վերաբերում են ընտանիքի բարոյականին, մարդկային փոխհարաբերություններում զիջելու, համակերպվելու, սիրելու ու ներելու հատկանիշների արժևորմանը:

Երկու հատորներում էլ հեղինակը գլխավոր կերպարների (առաջին հատորում՝ ծերունու, երկրորդում՝ Սաթենիկի) հիշողության, երևակայության ու մտածողության միջով առաջ է տանում համամարդկային հարցադրումների առանցքը. մյուս բոլոր կերպարները, առնչվելով այս կամ այն դրվագին, որոշակի տեսանկյունից ամբողջացնում են բովանդակային ներհյուսումները և դրանցից բխող փիլիսոփայական եզրահանգումները: Հեղինակը դեպքերի ու մտածումների համոզիչ ընթացքով բացահայտում է ընտանիքին նվիրված կնոջ կամքի ամրությունն ու համբերության անսահմանությունը:

---

[11] **Հատտէճեան Ռ.**, Առաստաղ, Առաստաղին միւս կողմը, էջ 266:

Մարդկային հոգու ծալքերը կատարելապես ճանաչող գրողի տեսակետն այն է, որ յուրաքանչյուր անհատ ինքնուրույն պետք է գտնի դժվար իրավիճակից դուրս գալու ելքը՝ ապավինելով միմիայն իր որոշումներին: Այսպես բացահայտվում է Սաթենիկի կերպարի ամենաուժեղ գիծը՝ համառ ու լուռ պայքարելու կարողությունը, հանուն կարևորագույն նպատակի և ընտանիքի բարօրության: Ո՛չ սովորական, ո՛չ էլ ծայրահեղ իրավիճակներում Սաթենիկը չի մոռանում պատասխանատվության մասին, և պետք է նկատել նաև նրա՝ իրավիճակը բոլորի տեսանկյունից քննելու ու հասկանալու, համակշռելու և ճիշտ եզրակացության հանգելու ունակությունը:

Թոռան՝ Ռուբիկի կերպարը խոր հոգեբանական շերտեր ունի. նա բարձրաձայնում է այն, ինչ զգացել է մեծ հայրիկը, ինչ մտածել, բայց երբեք չի ասել Սաթենիկը. «Մեծ հայրիկս մեռաւ հինգ տարի առաջ: Եւ մե՛նք ենք, որ մեռցուցինք այդ մարդը: Մենք՝ դուն, ես, մանաւանդ՝ հայրիկս: Ան պանանի կեղեւի մը վրայ կոխելով չէ, որ մեռաւ, անդամալոյծ ըլլալուն համար ալ չէր, որ մեռաւ: Մեռաւ, որովհետեւ զինքը թողուցինք ու եկանք հոս»[12]:

Ռուբիկի կերպարը ընդհանրացնում է Սփյուռքի այն սերունդը, որը դեռևս կապված է իր արմատներին հիշողությամբ ու պատասխանատվությամբ: Սակայն նրանից է սկսվելու անդառնալի օտարացումը՝ «բանիւ եւ գործով»:

Ռ. Հատտեճյանի «Առաստաղ» և «Առաստաղին միւս կողմը» հատորներում բազմաբնույթ հարցադրումները, եզրահանգումները և կերպարների բացահայտման գեղագիտական ընդգրկումները ներհյուսված են պատկերների ու նկարագրությունների, մենախոսությունների ու երկխոսությունների սահուն պատմելաոճին: Պատումի առաջին դեմքով շարադրելու գեղարվեստական հնարանքը սահմանում է մտերմիկ մի առանձնություն, որից դուրս գտնվող իրականությունը, թվում է, ոչ մի առնչություն չունի ծերունու կամ Սաթենիկի մտածումի ու երևակայության հետ:

Հոգեբան գրողը պատկերավորման արվեստում հասել է այնպիսի գեղագիտական կատարելության, ուր այլևս դադարում են գործել ժամանակային տարանջատումները, և անցյալն ու ապագան ամբողջովին միահյուսվում են ներկային: Ծայրահեղ իրավիճակները, հոգեբանական սուր պահերը, պարադոքսային պատկերները էլ ավելի հետաքրքրություն ու թափ են հաղորդում դիպաշարային դրվագներին ու բախումներին: Մարդկային հարաբերություններում կարևորելով հոգեկան զգացողությունները՝ Ռ. Հատտեճյանը հաճախ խուսափում է խոսքային լարված իրավիճակներից՝ լուծումներ փնտրելով մտածողական, հուզական ոլորտներում: Այդ դեպքում քննարկումներն ու պարզաբանումները դառնում են ավելորդ, և հերոսներից յուրաքանչյուրը, ըմբռնելով բախումի վտանգավորությունը, նախընտրում է փոխզիջումի ու համակերպման տարբերակը:

Խոր իմացականությունը, գեղագիտական բարձր ճաշակը, մարդկային ներաշխարհին ու մտածումներին քաջածանոթ լինելը գրողի այն կարևոր

[12] **Նույն տեղում**, էջ 256:

հատկանիշներն են, որոնցով պայմանավորված են Ռ. Հատտեճյանի գեղարվեստական արձակի ներքին ուժը, գունեղ պատկերայնությունն ու բազմաբովանդակ, բազմաշերտ թեմատիկան: Այս ամենով է հիմնավորվում «Առաստաղ» և «Առաստաղին միւս կողմը» հատորների մնայուն արժեքը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԱՆՀԱՏԻ ԵՐԿՎՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԹԱՏԵՐԱԽԱՂԵՐՈՒՄ

Պոլիսը, որ հայ թատրոնի զարգացման ու վերելքի օջախն էր տասնամյակներ շարունակ, որտեղ գործում էին բազմաթիվ թատերախմբեր, և իրենց անկրկնելի դերակատարումներով փայլում էին հայ բեմարվեստի մեծերը, անցյալ դարի 50-ականներին հոգեվարքի ու ամլության ժամանակներ էր ապրում:

Թարգմանական գործերին զուգահեռ՝ Մխիթարյան սանուց միության անդամների համարձակ գործունեությունը սկիզբ դրեց նոր ժամանակի խնդիրներն արծարծող պիեսների բեմադրմանը: Նրանց ձեռնարկումները թատրոնի ասպարեզում դարձան խթանող ուժ ու ոգևորող ազդակ՝ ստեղծագործական նոր մտահղացումների, մարտահրավերների ու հաղթանակների համար: Այդպիսիք եղան Վ. Աճեմյանի «Ներսէն ու դուրսէն», «Պատուհանը բաց չեն թողուր», «Ամէն մարդ իր թուղթը ունի», Արթո Պերպերյանի «Մկոյի պատմությունը» և «Մկոյի ճամփորդությունը» թատերախաղերը, որոնք երգիծանքով ներկայացված առօրյա-կենցաղային գործողություններ ունեին:

Նորագույն շրջանի հայ թատերգության ամենահայտնի դեմքերից է պոլսահայ հեղինակ Արման Վարդանյանը, Ինքնատիպ արվեստով, խիզախ ու ազատ մտածելակերպով «շարժումէն աւելի՝ գաղափար դրած է ան իր երկերուն մէջ, տեսակ մը «մշակուած մարդու թատրոն» կամ փիլիսոփայական թատրոն»[13], որի մի ծայրը անհեթեթության ձգտող երկխոսությունն է, մյուս ծայրը՝ նուրբ հումորը և զավեշտալի խորհրդածությունը:

Մխիթարյան սանուց միության թատրոնի կայացմանը անձնական ջանքն ու ներդրումն ունենալու փափագը դրդեցին Ռ. Հատտեճյանին այս շրջանում իր մտքի ներշնչանքները կյանքի կոչելու որպես թատերախաղեր: Այս ամենը ինքը իրեն փորձության ենթարկելու խիզախություն էր նաև, և Ռ. Հատտեճյանը գիտակցում էր, որ դրամատիկական սեռը բոլորովին այլ պահանջներ ունի և նոր մոտեցումներ է պահանջում նույնիսկ արձակի ասպարեզում ճանաչում ձեռք բերած հեղինակից: Թատերագիրը պետք է տիրապետի երկխոսություն ստեղծելու սկզբունքներին,

---

[13] «Կարծիքներ եւ գնահատականներ Արման Վարդանեանի ստեղծագործութիւններու մասին», Իսթանպուլ, «Մուրատ օֆսէթ» տպ., 2012, էջ 52:

ասելիքը կարողանա ներկայացնել սերտ պատկեր-գործողությունների համատեքստում:

Ռ. Հատտեճյանը սովոր է ունկնդիր լինելու համայնքի «սրտի զարկերին» և հասկանալու հանրության նախասիրություններն ու տրամադրությունը: Իսկ անցյալ դարի կեսերին մարդկանց փնտրածը թեթև, կատակերգական բեմադրությունն էր: «Սկսած էի հարց տալ ես ինծի, թէ արդեօք չե՞մ կրնար պատմուածքի մը լուրջ եւ փիլիսոփայական մտածումներով լեցուն մթնոլորտէն քիչ մը հեռանալ եւ կատակերգութիւն մը գրել: Ճիշդ ա՛յդ փորձն ընելու համար է որ գրեցի առաջին թատերախաղս եւ տեսայ որ կրնայի»[14],- խոստովանում է Ռ. Հատտեճյանը: Այսպես գրվեց «Կեանքի մը երեք Կիրակիները»: Այն Ռ. Հատտեճյանի առաջին դրանատիկական երկն է, որ տպագրության արժանացավ ու ներկայացվեց Մխիթարյան սանուց միության բեմում: Ըստ հեղինակի վկայության՝ կատակերգությունը գրված էր հատկապես Մխիթարյանցիների համար, և բեմադրվեց 1959 թվականին:

Արարներից յուրաքանչյուրում պատկերված են Նուարդ-Արա զույգի՝ սիրո, նվիրվածության, հոգատարության զգացումներով, միաժամանակ նաև պահանջկոտությամբ ու դժգոհությամբ լեցուն տարբեր փոխհարաբերություններ, որոնք ընդմիջվում են տարիների կտրվածքով, սակայն ընդհանրության մեջ դիպաշարն ու կերպարների ներքին զարգացումները ամբողջական են և ավարտուն: Ռ. Հատտեճյանը կարողացել է հմտորեն համադրել ժամանակը, շարժումը, ապրումը, զգացմունքը, մտածողությունն ու վերլուծությունը՝ այդ ամենը ներկայացնելով երկխոսության համատեքստում: Հեղինակի՝ մարդու հոգու իմացությունը հանգեցնում է նրան, որ կերպարների ոչ միայն փոխադարձ բացահայտման, այլև ինքնաբացահայտման շնորհիվ է ստեղծվում հաջողված պատկեր, որտեղ լուծումը մեկն է. դրամն ու հարստությունը փոխում են մարդուն, դարձնում հաշվենկատ, հարազատների նկատմամբ՝ սառն ու անտարբեր:

Ընտանեկան բարոյականին անդրադարձող մյուս գործը «Կիրակնօրեայ հաշուեփակ»-ն է, որը առաջին անգամ բեմադրվել է Փարիզում 1973 թվականին: Թատերախաղում Ռազմիկի և Մելինեի համատեղ կյանքի մեկ կիրակին է, բայց այն դառնում է յուրօրինակ հանրագումար, հետադարձ հայացք՝ միասին ապրած կյանքի ընթացքին: Կիրակնօրյա զրույցը սիրո փիլիսոփայության ինքնատիպ քննություն է, սեռերի փոխհարաբերությունների վրա հիմնված զգացումի հարափոփոխ հոլովույթը քննարկող և դրսևորման տարբեր «ձևերը» վերլուծող հոգեբանական բացահայտում:

Ռ. Հատտեճյանը իր դրամաներում փորձել է հոգեբանական և փիլիսոփայական լուծումներ գտնել պատկեր-ապրումների հոլովույթներում՝ սահմանափակելով շարժումի՝ պատկեր-գործողության ծավալումները, միաժամանակ ներկայացնելով ծայրահեղ իրավիճակներ, հոգեբանական խորք,

---

[14] Շառոյեան Լ., Յաւերժօրէն սիրելի «մերին Պոլիսը», Իսթանպուլ, «Մուրատ օֆսէթ» տպ., 2003, էջ 114:

ձևակերպելով անհեթեթ հարցեր ու լուծումներ: Նման մտածելակերպը հանգեցրեց թատերգության մեջ էկզիստենցիալիզմի փիլիսոփայության տարրերի տարբեր դրսևորումների՝ երբեմն հասցնելով մինչև աբսուրդի եզրերը: Միաժամանակ գրողը անդրադարձել է խորհրդանիշների՝ ասպարեզ բացելով իր դրամաներում գրական նոր հոսանքի՝ առարկայական խորհրդապաշտության գեղագիտական սկզբունքների դրսևորումներին:

Մարդու ազատության ու պատասխանատվության սահմանների միջև հակասության և ինքնության որոնման փիլիսոփայական հարցադրումներն են պայմանավորում «Մարդը եւ իր կեղեւը» մեկ վարագույրով թատերախաղի ընթացքը: Գործող անձինք են Մարդը, Կինը, Օտարականը և Հայրը: Նրանցից յուրաքանչյուրը՝ որպես խորհրդանիշ, առանձին է և ինքնաբացահայտման սահմաններում՝ ամբողջական, միաժամանակ սերտորեն առնչվում է մյուս կերպար-խորհրդանիշներին և հայտնվում նրանց հոգեկենսական տիրույթներում: Մարդու հոգու երկվությունը անխուսափելի է դարձնում երկընտրանքը Կնոջ ու Հոր նկատմամբ ունեցած պատասխանատվության և Օտարականի հետ նոր, ազատ կյանք փնտրելու անորոշության միջև: Հեղինակը փորձում է սահմանել Մարդու սեփական կեղևի տարողությունը, որը, ըստ Ռ. Հատտեճյանի, չի կարող սահմանափակվել Ես-ի գոյությամբ ու ընտրությամբ. այն ավելի լայն ուղեծիր ունի և տվյալ դեպքում՝ Կնոջը և հիվանդ Հորը առնչվող պարագաներին հարմարվելու անհրաժեշտություն:

Ըստ Ռ. Հատտեճյանի՝ իր կերպարը ստեղծելով՝ մարդը կերտում է շրջապատի պատկերը, ընտրում բոլորի կեցության խորհուրդն ու ձևը: Սրանից սկիզբ է առնում տագնապը, մտավախությունը՝ ազատ կամքի դրսևորման սեփական հնարավորությունների նկատմամբ: Մարդը երկմտում է պատասխանատվության ու ազատության որոնումների բավիղներում և որպես անհատ փորձում ի մի բերել բոլոր աղերսները, համադրել ու հակադրել հանգամանքները՝ գտնելու գոյության տրամաբանական սահմանումը:

1978-ին գրված և նույն թվականին «Մարմարա»-ի գրական-գեղարվեստական էջերում հրատարակված «Քիչ մը գութ եւ երկու կաթիլ արցունք»-ը հեղինակի կողմից ներկայացված է որպես «գրական պատկեր»: Գործող անձինք երկուսն են՝ Արտակը՝ աղքատ ու հիվանդ գործավորը, և Շապուհը՝ խոշոր կարողության տեր, քամահրոտ ու ինքնագոհ մի արարած, որի համար ամենակարևորը իր բարեկեցությունն է: Տվյալ դեպքում անհատը քննարկման առարկա է դարձնում սեփական զգացմունքները, ապրումները, մտածողությունը և ձգտում է իր գոյության իմաստը պատճառաբանել որպես առանձին, յուրահատուկ անձ, իսկ դրա համար անհրաժեշտ է, որ նա գտնվի ծայրահեղ իրադրության մեջ, այսինքն՝ մահվան հանդիման: Մահվան սպասող մարդը՝ Արտակը, ընդամենը «քիչ մը տաքուկ գութ» ու կարեկցություն է հայում իր գործատուից՝ շահամոլ Շապուհից: Այդպես նա փորձում է վերակերտել Շապուհին, բայց կատարվում են անդառնալի փոփոխություններ նաև իր հոգում ու մարմնում: Սրանից հետևություն, որ անհատը

ինքն է ստեղծում իր կյանքը, պարզում կեցության սահմանները, միաժամանակ բացահայտում կյանքի և մահվան առեղծվածը, նրանց անբաժանելիությունը:

Մարդ-անհատի երջանկության խնդիրը, նրա իրական տառապանքը արծարծելուն զուգահեռ՝ Ռ. Հատտեճյանը թատերախաղերում փորձել է անդրադառնալ նաև ազգային խնդիրներին: Սոցիալական հարցադրումների համամարդկային արտահայտությունը պոլսահայ հեղինակի համար դարձել է այն թափանցիկ շղարշը, որից այն կողմ ազգային թեման ո՛չ բողոք է, ո՛չ պահանջ և ո՛չ էլ կորստի ցավ. այն ամենից առաջ համակերպում է: Նման լուծում ունի «Վաստակը» դրաման: Սփյուռքի հայ ուսուցչի կերպարի իսկական մարմնավորումն է Վահե Ծերյանը, ով իր անձնական տառապանքից դուրս ստեղծել էր լուսավոր մի իրականություն, այն դարձրել կյանքի իմաստ ու մահվան հետ հաշտ ապրելու նախապայման:

1997 թվականին Ռ. Հատտեճյանը կրկին անդրադարձավ ազգային մտահոգությունների արծարծմանը և գրեց «Մահն ա՞յս է արդեօք» թատերախաղը: Թատերախաղի գեղարվեստական նպատակադրումն ու հիմնական գաղափարը ներդաշնակ են մեկ առանձնացած կերպարի առկայությանը: Սա ավելի է շեշտում լքվածությունն ու սպասումը միայնակ մարդու, որն ուժգնորեն կրում է հուսախաբության հարվածը: Ռ. Հատտեճյանը այս թատերախաղում էլ, ինչպես «Առաստաղ»-ում, անդրադարձել է Սփյուռքի ճակատագրին՝ պատկերելով լքված ծնողի տառապանքը և ազգային աղետը՝ արտագաղթը՝ որպես հայ իրականության ամենացավոտ երևույթ:

2002-ին առանձին գրքով՝ «Թատերախաղեր» խորագրով, լույս են տեսել Ռ. Հատտեճյանի՝ տարբեր տարիների տպագրված դրամատիկական վեց ստեղծագործությունները՝ «Կեանքի մը երեք Կիրակիները», «Կիրակնօրեայ հաշուեփակ», «Մարդը եւ իր կեղեւը», «Քիչ մը գութ եւ երկու կաթիլ արցունք», «Վաստակ», «Մահն ա՞յս է արդեօք» պիեսները:

Որպես հայ և համաշխարհային գրականության քաջատեղյակ հեղինակ՝ Ռ. Հատտեճյանը թե՛ գեղարվեստական արձակում և թե՛ թատերգության մեջ համադրում է ազգայինն ու համամարդկայինը, ձևակերպում ինքնատիպ մի սահմանում, որի գլխավոր առանցքում Մարդն է:

Այսպիսով՝ Ռ. Հատտեճյանը սկզբում դիտորդ էր ու հանդիսատես, ապա որոշ ժամանակ՝ ինքնավստահության ու վարանումի, ինքնահամոզումի և փորձության բևեռների մեջ իրական հնարավորությունները չափորոշող ստեղծագործ հոգի և, ի վերջո, փորձությունը հաղթահարած տաղանդավոր թատերագիր: Նա իր ներդրումն ունեցավ պոլսահայ նորագույն թատրոնի պատմության մեջ, զերծ մնաց արհեստական ու անբնական ձևակերպումներից՝ միաժամանակ հավատարիմ մնալով անհատական աշխարհայացքի փիլիսոփայական հիմնավորումներին և ոճի առանձնահատկություններին:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՀԱՏՏԵՃՅԱՆ ԳԵՂԱԳԵՏԸ «ՅՈՒՇԱՏԵՏՐ»-ԵՐԻ ԷՋԵՐՈՒՄ

20-րդ դարի վերջերից մարդկանց այլևս չէր ոգևորում ֆանտաստիկ կամ արկածային գրականությունը, հանրությանը ավելի իրատեսական, վավերագրական տարրեր պարունակող և առօրյա խնդիրներին անդրադարձող գրվածքներ էին անհրաժեշտ: Եվրոպական գրականության մեջ արդեն կային նման ժանրի դրսևորումներ, որ կարելի էր դիտարկել որպես գեղարվեստավավերագրական արձակ:

Պոլսում լույս տեսնող «Մարմարա» օրաթերթը, սկսած 1981-ի օգոստոսի 4-ից, իր առաջին էջում ներկայացնում է խմբագրապետ Ռ. Հատտեճյանի «Յուշատետր» էսսեների սյունակը: «Յուշատետր»-ի բովանդակային առանձնահատկություններին Ռ. Հատտեճյանը բազմիցս անդրադարձել է հանդիպումների և հարցազրույցների ժամանակ: Նման ստեղծագործությունների մեջ, ինչպես հեղինակն է ասում, «. . .կրնան գտնել քիչ մը արուեստ, քիչ մը փիլիսոփայութիւն, քիչ մը հոգեբանութիւն, քիչ մը մշակոյթի պատմութիւն, քիչ մը գրականութիւն, եւ այս բոլորին մէջէն յայտնուող ճաշակ մը. ..»[15]:

1982-ից սկսած՝ ամեն տարի առանձին գրքերով տպագրվում են Ռ. Հատտեճյանի «Յուշատետր» վերտառությամբ գրքերը, որոնք պարունակում են որոշակի ժամանակահատվածում «Մարմարա»-ի նույնանուն սյունակում լույս ընծայված, թեմատիկ ընդհանրություն ունեցող, հաճախ մեկ ընդհանուր խորագրի տակ հավաքված էսսեները: Գրքերից յուրաքանչյուրի առաջին էջում տրված է տեղեկություն՝ ընդգրկված հատվածների բնույթի, քանակի և դրանք գրելու, տպագրելու ժամանակի մասին, նաև հեղինակի խոսքը՝ ուղղված ընթերցողին:

Ռ. Հատտեճյանի «հուշատետրային» արձակի կարևոր առաքելությունը արվեստի, մշակույթի ոլորտների իրադարձությունների մասին «Մարմարա»-ի ընթերցողներին տեղեկացնելն է, հասարակության մեջ հնարավորինս բարձր գեղագիտական ճաշակ զարգացնելը: Հեղինակը ձգտում է հետագա սերունդների մեջ ազգային մշակույթի, հայոց լեզվի, հայ գրականության ու նրա մշակների նկատմամբ ակնածանք սերմանել, հայրենի ավանդները կրկին շնչավորել:

«Յուշատետր»-ը դարձավ Ռ. Հատտեճյանի տարերքը. նա պետք չուներ ստիպողաբար ինչ-որ բան գրելու, գրում էր այն, ինչ անհրաժեշտ ու հետաքրքիր էր համարում, ինչի մասին ասելիք էր ունենում իր ընթերցողին: Գեղարվեստական հրապարակախոսության ժանրային կատարյալ ազատությունը հնարավորություն է ընձեռում դիմանկարային կամ հուշագրական ուրվապատկերը «շաղախելու» փիլիսոփայական դատողությամբ, ընդգծելու ժամանակի քննություն անցած երևույթների կարևորությունը, համադրելու ողբերգականն ու երգիծականը, առօրեականն ու պատմականը: ««Յուշատետր» գրելու ընթացքին երբեք չեմ տառապիր «նիւթ փնտռելու» դժուարութենէն: Երբեմն օրական 6-7 սիւնակ

---

[15] **Յակոբեան Մ.**, Անվերջակէտ զրոյց՝ մեր գրականութեան երախտաւորներուն հետ, Իսթանպուլ, «Մուրատ օֆսէթ» տպ., 2013, էջ 97:

«Յուշատետր» կը գրեմ, մինչ 20 այլ սիւնակներ գլխուս մէջ կուտակուած կ'ըլլան...»[16],- խոստովանում է Ռ. Հատտեճյանը:

Նրա գեղարվեստավավերագրական հերոսը ժամանակի արհավիրքներից խոցելի, բայց նաև այդ արհավիրքներին հնարավորինս դիմակայող ստեղծագործող անհատն է, որ իր էկզիստենցիալ էությամբ ու մտածողությամբ բարդ ու ճկուն համակարգ է ստեղծում՝ իրականության և ժամանակի մեջ ընկալվելու համար:

Հիմնվելով անձնական տպավորությունների, ժամանակակիցներից լսած տեղեկությունների, նաև գրական մարդկանց՝ պարբերականներում հրատարակված անձնական նամակների և հուշագրությունների վրա՝ Ռ. Հատտեճյանը բացում է հայ գրականության ետնաբեմի վարագույրը, ներկայացնում ուշագրավ պատումներ գրողների կյանքի, այս կամ այն ստեղծագործությունը գրելու նախապատմության վերաբերյալ: Նման պատմությունները, ունենալով իրապաշտական ու տպավորապաշտական հենք, ներառում են նաև Ռ. Հատտեճյանի փիլիսոփայական ընդհանրացումները և ունեն ճանաչողական արժեք:

Հայ մեծերի անձնական տառապանքը պատկերելուն զուգահեռ՝ «Յուշատետր»-երի հեղինակը անցողակի, երբեմն էլ հանգամանորեն անդրադառնում է պատմական այնպիսի դրվագների, որոնք չափազանց կարևոր ու բախտորոշ են եղել Հայաստանի և Սփյուռքի համար:

Ռ. Հատտեճյանի գեղարվեստական հրապարակագրության առանձնահատկություններից է նշանավոր գրական-հասարակական գործիչների կյանքը պատմական իրարահաջորդ դեպքերին միահյուսված ներկայացնելը, որի արդյունքում ստացվում է մի ամբողջ ժամանակաշրջանի համապարփակ նկարագիրը: Այս առումով «Յուշատետր»-երը յուրօրինակ քրոնիկոններ են, որ արտացոլում են հեղինակի անդրադարձումները հայ ժողովրդի պատմության կարևոր դեպքերին:

Գ. Զոհրապի, Սիամանթոյի, Հ. Թլկատինցու, Ե. Տեմիճիպաշյանի, Ինտրայի, Վարուժանի, Ռուբեն Սևակի և այլոց գործունեությունը ներկայացնող էսսեները կարևոր վավերագրեր են 20-րդ դարասկզբի արևմտահայ գրական-մշակութային զարգացումների, ձեռքբերումների, նաև սահմանափակումների ու հակասությունների մասին: «Յուշատետր»-երի՝ հայ գրականության վերջին տասնամյակների գրական կյանքին վերաբերող հատորներում («Պտոյտ մը հայ բանաստեղծութեան պարտէզին մէջ» «Պտոյտ հայ գրականութեան քուլիսներուն մէջ», «Առագաստ՝ դէպի բանաստեղծութիւն») հեղինակը կարևորել է ազգային մտածողության գեղագիտական դրսևորումները:

«Յուշատետր»-երում հեղինակը ներկայացնում է նշանավոր հեղինակների գրական-հրապարակախոսական ու հանրային գործունեությունը նախաեղեռնյան տարիներին, երբ նրանք հասարակական ու ստեղծագործական կյանքի

---

[16] **Շառոյեան Լ.**, Յաւերժօրէն սիրելի «մերին Պոլիսը», էջ 131:

բարձրակետում էին: Այնուհետև հաջորդում են նրանց ծերբակալվելու, տառապալից գողգոթա անցնելու, ոմանց փրկվելու և ոմանց նահատակվելու պատմությունները: Վավերագրական պատումները շարունակաբար հասնում են մինչև ստալինյան բռնապետության տարիներ, մինչև 60-ականների բեկման ու զարթոնքի, նոր մտածողության ժամանակներ:

Ռ. Հատտեճյանը կարևորել է հայ գրական ու մշակութային կյանքի նշանավոր դեմքերի ոչ միայն ստեղծագործությունների, այլև ապրած կյանքի իմացությունը, որովհետև դա, ըստ նրա, կենդանի մշակույթ է և օժանդակում է ստեղծագործող անհատի գործի հասկացվածությանը և արժևորմանը:

«Յուշատետր»-երը խիստ ու արդարացի գնահատական ունեն նաև պատմական դաժան ժամանակամիջոցի՝ ստալինյան բռնապետության նկատմամբ, որը նշանավորվեց որպես «Երկրորդ Ապրիլի 24», որպես ազգային արվեստի ու գրականության գլխատման, մշակութային արժեքների ոտնահարման արյունոտ տարեգրություն, տաղանդավոր հայորդիների դատապարտում և աքսոր: «Կարծես թէ չէր բաւեր այն մաքրագործումը որ մեր մշակոյթին դէմ կը դարբնուէր ինչ ինչ ժխտական օտար ուժերու կողմէ....»[17],- գրել է Ռ. Հատտեճյանը Ե. Չարենցի, Գ. Մահարու, Զ. Եսայանի և այլոց մասին: Գրողը էսսեներում շարունակաբար ներկայացրել է ժամանակի կաղապարված պահանջկոտությանը դիմադարձող անհատի հոգեկան դրաման, որը դեպքերի ոչ բարենպաստ զարգացման ու ստեղծագործական վերելքի արդյունքում պետք է ի վերջո հասներ մի կետի, որից այն կողմ խզումն անխուսափելի է:

Դժվար է ասել՝ «Յուշատետր»-ի ամենօրյա լեցուն սյունակի անհրաժեշտությո՞ւնը, խմբագրապետի պատասխանատու աշխատա՞նքը, թե՞ ստեղծագործելու փափագն է ներշնչում գրողին, բայց իրականությունն այն է, որ Ռ. Հատտեճյանը «կը նմանի անդուլ ճակատամարտ մղող զօրականի մը, որուն լամբը մինչեւ ցերեկ չի մարիր... ահա իր նուաճումներուն բանալին»[18]:

---

[17] **Հատտէճեան Ռ.**, Յուշատետր 59, Պտոյտ հայ գրականութեան քուլիսներուն մէջ, հտ Ա, Իսթանպուլ, «Մուրատ օֆսէթ» տպ., 2007 էջ 198:

[18] **Թորանեան Թ.**, Իսթանպուլահայերը կը կանչեն, Իսթանպուլ, «Արաս» հրատ., 1997, էջ 52:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխատանքի արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

1. Ռոպեր Հատտեճյանի արձակում յուրովի արտահայտվեց 20-րդ դարասկզբի եվրոպական գրականության մեջ կայացած և հայ հեղինակների՝ Զ. Որբունու, Վ. Շուշանյանի, Վ. Հայկի, Շ. Շահնուրի ստեղծագործություններում հիմնավորված գեղարվեստական մի մեթոդի՝ էկզիստենցիալիզմի գեղագիտությունը, որի ուսումնասիրության շրջանակն ընդգրկում է մարդասիրության, անձի հոգեկերտվածքի, պատասխանատվության սահմանների և հասարակության փոխներգործությունների քննությունը, մարդու ներաշխարհի և միջավայրի միջև ստեղծված խզման, ինչպես նաև ներդաշնակության հասնելու ձգտման բանաձևի որոնումը: Ռ. Հատտեճյանի գոյապաշտական սկզբունքները խորապես ազգային են, և նա հայ գրականության մեջ այդ դպրոցի հետևորդներից է:

2. Փոքր սյուժեները և կերպարների խոր ապրումները Ռ. Հատտեճյանի պատմվածքներում ստեղծում են ձևաբովանդակային յուրօրինակ ներհյուսումներ, որոնց բնորոշ են մարդկային տառապանքի կերպավորումը, աբսուրդի և զավեշտի նուրբ երանգավորումները: Առավել ընդգծուն արտահայտվում է անհատի անկումի պահն ու ինքնակենտրոնացման ճիգը, միաժամանակ՝ հեղինակի հավատը նրա կայացման, կամքի ու պատասխանատվության նկատմամբ:

3. Համամարդկային հարցերի քննարկման տիրույթում, պատկերելով մարդու էության հոգեբանական խորքը, Ռ. Հատտեճյանն իր պատմվածքներում և «Առաստաղ» երկհատոր վեպում սահմանել է մարդու գոյության ու ազատության խորհուրդը, որը հիմնավորվում է սեփական ընտրության ու շրջապատի վերակերտման անհրաժեշտությամբ:

4. Պատճառաբանելով անհատի հուսալքությունը, կորստի ու կարոտի ցավը՝ Ռ. Հատտեճյանը վեպի հանգուցալուծումներում հաստատել է երջանկության բանաձևը, որը մարդու զգացական դաշտից հասնում է մինչև ազգային բաղձանքի սահմանները: Ռ. Հատտեճյանը անձի անհատական հոգեբանության, ապրումի և ինքնագնահատման տեսանկյունից անդրադարձել է գոյաբանական խնդիրներին՝ կարևորելով անհատի՝ հիշելու ունակությամբ անցյալին կապված լինելու և երևակայելու կարողությամբ ապագան կանխատեսելու հանգամանքները:

5. Համադրելով ազգայինն ու համամարդկայինը՝ Ռ. Հատտեճյանը գեղագիտական ձևակերպումներում զերծ է մնացել արհեստական ընդհանրացումներից: Լքվածի հոգեբանությունն ու հուսահատությունը գրողը պատկերել է ազգային ողբերգության հենքի վրա, իսկ համամարդկային տեսանկյունից կերպարների ընտրությունն ու գեղագիտական ընդհանրացումները առնչվում են էկզիստենցիալիստ հեղինակների գործերին: Ընտրելով իր արարքների բարոյականությունը՝ մարդը՝ որպես սուբյեկտ, գիտակցում է, որ ինքը միաժամանակ ուրվագծում է ապագան, որը նրան կանգնեցնում է պատասխանատվության առաջ:

6. Ռ. Հատտեճյանն իր հեղինակած պիեսներով մնայուն անուն է ձեռք բերել պոլսահայ նորագույն թատրոնի պատմության մեջ: Տիրապետելով երկխոսության արվեստին՝ նա երգիծանքն ու զավեշտը միահյուսել է մարդկային հոգու տագնապներին ու երևակայության անսահմանությանը: Դրամատիկական երկերում արծարծելով մարդու բարոյականության խնդիրները՝ Հատտեճյանը ընտանեկան և անհատական փոխհարաբերություններում, ազատության ու պատասխանատվության միջև հակասությունների լուծումներում կարևորել է փոխադարձ բացահայտման և ինքնաբացահայտման սկզբունքները:

7. Թատերագիր Հատտեճյանը հերոսների մտածողության տիրույթում ու երկխոսության համատեքստում բացահայտել է մարդկային ապրումը: Ըստ նրա՝ անհատի ամբողջականությունը դուրս է սովորական Ես-ից. այն ավելի լայն ընդգրկում ունի և համալրվում է անձի երկվության, ինքնության որոնման ու միջավայրին հարմարվելու անհրաժեշտությամբ: Թատերախաղերի բովանդակային ծավալումները և հիմնական արծարծումները կապվում են մարդկային բնավորության հոգեբանական շերտերի բացահայտումներին:

8. Հրապարակախոսական գործունեությամբ, մասնավորապես «Մարմարա» օրաթերթում ծավալած աշխատանքով Ռ. Հատտեճյանը զգալի ավանդ ունի Սփյուռքի հայապահպան ծրագրերի իրականացման ասպարեզում: Անուրանալի են նրա ջանքերը՝ ուղղված պոլսահայ գրական օջախը համախմբելուն, սերնդակից հեղինակներին ոգևորելուն, Սփյուռքի և Հայաստանի միջև գրական կապերն ամրակայելուն:

9. «Մարմարա» օրաթերթի «Յուշատետր» սյունակը՝ բովանդակային ազատության հնարավորությամբ և գեղարվեստավավերագրական պատումի դրսևորումներով, Հատտեճյան գեղագետի հայացքն է՝ ուղղված աշխարհին ու մարդուն: «Յուշատետր» վերնագրով գրքերը գիտահանրամատչելի ոճով ներկայացնում են Ռ. Հատտեճյանի հուշագրությունները, ուղեգրությունները, գրաքննադատական վերլուծությունները, հայ հեղինակների ոճի ու մեթոդի ձևաբովանդակային առանձնահատկությունները, ստեղծագործությունների թեմատիկ ընդհանրությունները:

10. Ռ. Հատտեճյանի «Յուշատետր»-երը յուրօրինակ քրոնիկոններ են, որոնք, պատմական դեպքերին միահյուսված, ժամանակագրական հերթագայությամբ ներկայացնում են հեղինակի տեսակետները՝ հայ գրականության պատմության արժանահիշատակ դեպքերի ու դեմքերի վերաբերյալ:

11. Անդրադառնալով հայ գրականության պատմական զարգացման տարբեր ժամանակահատվածների և որպես փաստական աղբյուր օգտագործելով գրական մարդկանց անձնական նամակները, ժամանակակիցների հուշագրություններն ու պատմությունները՝ Ռ. Հատտեճյանը «Յուշատետր»-երում ներկայացրել է հայրենական, արևմտահայ ու սփյուռքահայ հեղինակների առնչությունները, նրանց ստեղծագործությունների գեղագիտական ընդհանրությունները, գրվածքների ստեղծագործական պատմությունը, փաստերի ճշտությունը, գեղարվեստական վերլուծություններն ու համադրությունները: Սրանք, ըստ Ռ.

Հատտեճյանի, ապահովում են հայ գրականության երախտավորների և նրանց ստեղծագործությունների ճանաչումն ու արժևորումը:

12. Ռ. Հատտեճյանը մեր ժամանակների ամենաբեղուն հայ հեղինակներից է, որ ստեղծագործել է արձակի գրեթե բոլոր ժանրերով, ինքնատիպ խոսք ասել թատերգության ու գեղարվեստական հրապարակագրության ասպարեզներում, ընդունվել որպես հայ բանաստեղծական խոսքն ընկալող վերլուծաբան ու գրաքննադատ:

Ատենախոսության հիմնադրույթները ներկայացված են հետևյալ հրապարակումներում.

1. Ռոպեր Հատտեճյանի գրական մուտքը. «Բառասխալ» ժողովածուն, ԱրՊՀ «Գիտական տեղեկագիր» (հասարակական գիտություններ), Ստեփանակերտ, 2022, հ.1, էջ 71-80:
2. Էկզիստենցիալիզմի դրսևորումը Ռ. Հատտեճյանի ստեղծագործության մեջ. «Մարդոց մեծութեան եւ խեղճութեան մասին» ժողովածուն, «Մեսրոպ Մաշտոց» համալսարան, «Լրատու», Ստեփանակերտ, 2022, էջ 217-227:
3. Ռոպեր Հատտեճյան. կերպարի բացահայտման սահմանները, «Գրիգոր Նարեկացի» համալսարան, «Դպրատուն», Ստեփանակերտ, 2022, հ. 1, էջ 54-60:
4. Մարդու արժևորման խնդիրը Հատտեճյանի «Թատերախաղեր» ժողովածուում, «Հայագիտական հանդես», Եր., 2022, էջ 139-149:
5. Մի քանի նկատառումներ Ռոպեր Հատտեճյանի գրական-հրապարակախոսական գործունեության վերաբերյալ, «Գիտության և կրթության դերը պետության զարգացման գործում» («Մեսրոպ Մաշտոց» համալսարանի 25-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու), Ստեփանակերտ, «Դիզակ պլյուս» հրատ., 2022, հոկտեմբերի 29, էջ 307- 315:
6. Մտածումի փիլիսոփայությունը Ռ. Հատտեճյանի «Առաստաղ» և «Առաստաղին միւս կողմը» վեպերում, ԱրՊՀ «Գիտական տեղեկագիր»(հասարակական գիտություններ), Ստեփանակերտ, 2-2022, էջ 70-81:
7. Ազգային գիծը Ռոպեր Հատտեճյանի «Առաստաղ» և «Առաստաղին միւս կողմը» վեպերում, «Պոլսահայ գրականութիւնը 20-րդ դարի կեսից մինչեւ մեր օրերը» (համահայկական գիտաժողովի զեկուցումներ), Եր., «Արմավ» հրատ., 2023, էջ 64-77:
8. «Յուշատետր» էսսեների գեղարվեստավավերագրական հիմնավորումները, «Հայագիտական հանդես», Եր., 2024, հ. 3-4, էջ 74-87:

БАЛАЯН МАНУШ ЭМИЛЕВНА

ЭСТЕТИКА ТВОРЧЕСТВА РОПЕРА АТТЕЧЯНА

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.01.02 – «Армянская литература новейшего периода».

Защита диссертации состоится 11 июля 2025 года в 12:30 часов, на заседании специализированного совета 003 Комитета по высшему образованию и науке по специальности «Литературоведение» при Институте Литературы имени М. Абегяна НАН РА по адресу: г.Ереван, Ул.Г.Лусаворич 15.

РЕЗЮМЕ

В работе представлено исследование творчества проживающего в Константинополе армянского прозаика, драматурга, публициста и литературного критика, главного редактора ежедневной газеты «Мармара» Ропера Аттечяна. Он разработал новые принципы эстетического восприятия в западноармянской литературной колыбели, опираясь на методологию Экзистенциализма, развивающегося в современной европейской литературе, рамки изучения которой охватывают поиск формулы разрыва и гармонии, созданной между внутренним миром человека и окружающей средой.

Предметом диссертации является попытка по-новому оценить творчество Р. Аттечяна. В соответствии с этим были поставлены следующие задачи: показать связь между писателем и эпохой, выявить эстетические особенности произведений, выявить экзистенциальные отправные точки взаимоотношений личности и общества, интерпретировать искусство создания образа писателя, рассмотреть сопоставление национальных и общечеловеческих ценностей.

Актуальность работы обусловлена попыткой ознакомить более широкие круги научного сообщества с творчеством Р. Аттечяна, а также обосновать эстетические осмысления, философские пласты мировоззрения автора с новой точки зрения. Научная новизна работы заключается в том, что предпринята попытка рассмотреть творчество Ропера Аттечяна в контексте рассмотрения схожих армянских и мировых тем, посредством сопоставлений.

Для обоснования положений, выдвинутых в диссертации, мы руководствовались тематико-жанровым, а также хронологическим методами исследования. В ряде случаев мы прибегали к сравнительному анализу и историко-сравнительному методу.

Работа состоит из введения, четырех глав, заключения и списка использованной литературы. В главах диссертации мы попытались сохранить хронологическую связь, но в то же время подчеркнули тематическое разделение. Во введении излагается предмет диссертационного исследования, степень проработанности материала, цели и задачи, теоретико-методологические основы работы, актуальность.

Первая глава диссертации под названием «Искусство создания характера в малой прозе» отсылает к сборникам рассказов Ропера Аттечяна «Ошибка» (1972) и «О величии и бедности людей» (1979) и экзистенциальным вопросам, поднятым в них. В частности, подчеркивается раскрытие глубоких чувств через небольшие сюжеты, переплетенные с тонкими переходами абсурда и иронии, обыденного и необычного, воображаемого и

повседневного. Наиболее яркой особенностью здесь является констатация человеческого одиночества. В этой части работы проводится исследование сюжета и системы персонажей.

Произведение "Ошибка" раскрывает различные аспекты отношений между людьми. Каждое явление или слово в жизни имеет внутреннюю потребность во взаимопонимании, глубину которой отмечает писатель. В сборник вошли 19 рассказов, написанных в период с 1946 по 1960 год и опубликованных в периодических изданиях «Анив», «Чарагайт», «Ерджаник тарегирк», «Сан» и «Мармара» до выхода отдельной книгой. В них автор послойно раскрывал психологические узлы человеческих отношений.

Рассказы из сборника "О величии и бедности людей" исследуют внутреннюю сущность человека, которая дает представление о внутреннем видении души и тела. Автор пытается с помощью философских обобщений охарактеризовать личность, ее внутренний мир, окруженный сетью величия и бедности. Вырисовывается панорама, в которой равнина и гора, свет и тень, а также величие и бедность не могут существовать друг без друга.

Вторая глава работы под названием «Эстетика психологического опыта: «Потолок»» посвящена рассмотрению двухтомного романа Р. Аттечяна «Потолок» (1983) и «По ту сторону потолка» (2000).

Анализ романа показывает образ жизни армянского народа, пределы индивидуального мышления и воображения, возможности автора в создании образов и интерпретации символов, пласты отношения разных поколений к одному и тому же явлению или событию. Несмотря на то, что ключевой темой романа считается национальная тема, Р. Аттечян также затрагивает различные философские концепции, переплетенные с мышлением персонажей.

Через образ старика Р. Аттечян затрагивает теорию экзистенциализма, особенно философию бунта. Мотивируя отчаяние человека, боль утраты и тоски, автор установил формулу счастья в развязках романа, которая простирается от эмоционального поля обычного человека до границ национального стремления, вплоть до исключения разрыва между поколениями по субъективным причинам, достижение гармонии между человеком и окружающей средой.

Изображая психологическую многослойную структуру человеческой природы в сфере обсуждения всеобщих вопросов, Р. Аттечян определил в своей прозе таинство человеческого существования и ответственности, которое обосновано необходимостью собственного выбора и переустройства своего окружения.

Третья глава работы под названием «Проявления двойственности личности в театральных играх» представляет собой исследование сборника Р. Аттечяна "Пьесы", опубликованного в 2002 году.

Владея искусством диалога, автор переплел сатиру и юмор с тревогами человеческой души и безграничностью воображения. Воздерживаясь от искусственных и неестественных формулировок в эстетических обобщениях, Р. Аттечян в драмах пытался найти психологические и философские решения в сочетаниях образов-переживаний, ограничивая масштабы движения-образа-действия, представляя экстремальные ситуации, психологическую глубину, формулируя абсурдные вопросы и решения. Подобный образ мышления привел к различным проявлениям элементов

философии экзистенциализма, иногда доходящим до абсурда. В то же время писатель обращается к символам, открывая поле для проявления эстетических принципов нового литературного течения — объективного мистицизма. Некоторые эстетические принципы объективного мистицизма, переплетаясь с положениями экзистенциалистского мышления, создали в драматических произведениях Р. Аттечяна богатую образную систему с глубокой гносеологией.

Четвертая глава под названием "Эстетик Аттечян на страницах "Записной книжки"" представляет собой содержательное рассмотрение очерков Р. Аттечяна, опубликованных в рубрике «Записная книжка» ежедневной газеты «Мармара», а затем изданных отдельными книгами. В книжных изданиях под названием «Записная книжка» в научно-популярном стиле представлены мемуары, путевые заметки, литературно-критические анализы Р. Аттечяна, формальные и содержательные особенности стиля и метода отдельных авторов, их взаимоотношения, с тематическими обобщениями. Одной из особенностей публицистики Р. Аттечяна является представление жизни выдающихся литературных и общественных деятелей, переплетенной с последовательными историческими событиями. В этом отношении «Записная книжка» рассматривается как уникальная хроника. В своих «Записных книжках» под названиями «На пути к поэзии», «Круг по саду армянской литературы», «Поворот за кулисы армянской литературы», размышляя о разных периодах исторического развития армянской литературы и используя в качестве фактических источников личные письма литературных деятелей, мемуары и рассказы современников, Р. Аттечян подчеркнул проявления самобытности в портрете писателя, творческой истории произведений.

Таким образом, Р. Аттечян является одним из самых плодотворных армянских авторов современности, творившим практически во всех жанрах прозы, выразившим свое весомое мнение в области театра и художественной публицистики, признанным аналитиком и литературным критиком, воспринимающим армянскую поэтическую речь.

Результаты диссертации могут быть использованы в рамках спецкурсов по диаспороведению и филологии, а также использованы для выполнения различных выпускных работ и магистерских диссертаций.

MANUSH EMIL BALAYAN

THE AESTHETICS OF ROPER HATTECHYAN'S WORK

Thesis submitted for the degree of Candidate of Philological Sciences, specialty 10.01.02 – “Armenian Literature of the Modern Period”.

The defense of the thesis will be held on 11 July in 2025, at 12:30 a.m. at the session of the Special Board 003 of the Higher Education and Science Committee in the field of Literary Studies at the M. Abeghyan Institute of Literature of the National Academy of Sciences of the Republic of Armenia, located at 15 G. Lusavorich Street, Yerevan.

SUMMARY

This paper presents a study of the work of Roper Hattechyan, an Armenian prose writer, playwright, publicist, literary critic, and editor-in-chief of the daily newspaper Marmara, who lived in Constantinople. He developed new principles of aesthetic perception in the cradle of Western Armenian literature, drawing on the methodology of existentialism, which was developing in contemporary European literature and whose scope of study encompassed the search for a formula for rupture and harmony created between the inner world of man and his environment.

The subject of the dissertation is an attempt to re-evaluate the work of R. Hattechyan. In accordance with this, the following tasks were set: to show the connection between the writer and the era, to reveal the aesthetic features of the works, to identify the existential starting points of the relationship between the individual and society, to interpret the art of creating the image of the writer, and to consider the comparison of national and universal values.

The relevance of this work stems from an attempt to familiarise a wider scientific community with the work of R. Hattechyan, as well as to substantiate aesthetic interpretations and philosophical layers of the author's worldview from a new perspective. The scientific novelty of the work lies in the attempt to examine the work of Roper Hattechyan in the context of similar Armenian and global themes through comparisons.

To substantiate the propositions put forward in the dissertation, we used thematic-genre and chronological research methods. In a number of cases, we resorted to comparative analysis and the historical-comparative method.

The work includes an introduction, four chapters, a conclusion, and a list of references. The chapters follow a primarily chronological structure, while also emphasizing thematic divisions. The introduction presents the research topic, the extent of its coverage, the aims and objectives of the study, its theoretical and methodological foundations, and its relevance.

The first chapter of the dissertation, entitled ‘The Art of Character Creation in Short Prose,’ refers to Roper Hattechyan's short story collections ‘The Mistake’ (1972) and ‘On the Greatness and Poverty of People’ (1979) and the existential questions raised in them. In particular, it emphasises the revelation of deep feelings through short stories interwoven with subtle transitions between absurdity and irony, the ordinary and the unusual, the imaginary and the everyday. The most striking feature here is the observation of human loneliness. This part of the work examines the plot and the system of characters.

The work ‘Mistake’ reveals various aspects of human relationships. Every phenomenon or word in life has an inner need for mutual understanding, the depth of which is noted by the writer. The collection includes 19 stories written between 1946 and 1960 and published in the periodicals Aniv, Charagait, Erdzhanik Taregirk, San, and Marmara before being released as a separate book. In them, the author gradually reveals the psychological knots of human relationships.

The stories in the collection ‘On the Greatness and Poverty of People’ explore the inner essence of man, which gives an idea of the inner vision of the soul and body. The author attempts to use philosophical generalisations to characterise the personality and its inner world, surrounded by a network of greatness and poverty. A panorama emerges in which the plain and the mountain, light and shadow, as well as greatness and poverty cannot exist without each other.

The second chapter of the work, entitled ‘The Aesthetics of Psychological Experience: “The Ceiling”,’ is devoted to an examination of R. Hattechyan's two-volume novel ‘The Ceiling’ (1983) and ‘Beyond the Ceiling’ (2000).

The analysis of the novel reveals the way of life of the Armenian people, the limits of individual thinking and imagination, the author's ability to create images and interpret symbols, and the layers of different generations' attitudes towards the same phenomenon or event. Although the key theme of the novel is considered to be the national theme, R. Hattechyan also touches on various philosophical concepts intertwined with the characters' thinking.

Through the image of the old man, R. Hattechyan addresses the theory of existentialism, especially the philosophy of rebellion. Motivating human despair, the pain of loss and longing, the author establishes a formula for happiness in the novel's dénouement, which extends from the emotional realm of the ordinary person to the boundaries of national aspiration, to the exclusion of the gap between generations for subjective reasons, to the achievement of harmony between man and his environment.

Depicting the psychological multi-layered structure of human nature in the context of discussing universal issues, R. Hattechyan defined in his prose the mystery of human existence and responsibility, which is justified by the need for personal choice and the restructuring of one's environment.

The third chapter of the work, entitled ‘Manifestations of Duality of Personality in Theatre Plays,’ is a study of R. Hattechyan's collection ‘Plays,’ published in 2002.

Mastering the art of dialogue, the author intertwined satire and humour with the anxieties of the human soul and the boundlessness of imagination. Refraining from artificial and unnatural formulations in aesthetic generalisations, R. Hattechyan attempted to find psychological and philosophical solutions in his dramas through combinations of images and experiences, limiting the scope of movement, image and action, presenting extreme situations and psychological depth, and formulating absurd questions and solutions. This way of thinking led to various manifestations of elements of existentialist philosophy, sometimes reaching the point of absurdity. At the same time, the writer turns to symbols, opening up a space for the manifestation of the aesthetic principles of a new literary movement — objective mysticism. Some aesthetic principles of objective mysticism, intertwined with the tenets of existentialist thinking, created a rich imagery system with deep gnoseology in R. Hattechyan's dramatic works.

The fourth chapter, entitled ‘Aesthetic Hattechyan in the Pages of the Notebook,’ is a substantive review of R. Hattechyan's essays, published in the ‘Notebook’ section of the daily newspaper Marmara and later published as separate books. The book editions entitled ‘Notebook’ present R. Hattechyan's memoirs, travel notes, literary-critical analyses, formal and content-related features of the style and method of individual authors, their relationships, with thematic summaries in a popular science style. One of the features of R. Hattechyan's journalism is the presentation of the lives of outstanding literary and public figures, intertwined with successive historical events. In this respect, ‘Notebook’ is considered a unique chronicle. In his ‘Notebooks’ entitled ‘On the Path to Poetry,’ ‘A Circle in the Garden of Armenian Literature,’ and ‘A Turn Behind the Scenes of Armenian Literature,’ reflecting on different periods of the historical development of Armenian literature and using personal letters from literary figures, memoirs, and stories from contemporaries as factual sources, R. Hattechyan emphasised the manifestations of originality in the portrait of the writer and the creative history of the works.

Thus, R. Hattechyan is one of the most prolific contemporary Armenian authors, who has written in almost all genres of prose, expressed his authoritative opinion in the field of theatre and artistic journalism, and is a recognised analyst and literary critic who understands Armenian poetic speech.

The results of the dissertation can be used in special courses on diaspora studies and philology, as well as for various final works and master's theses.